

ճաւոր Արեւելքի ժողովուրդներուն առաւել կամ նուազ յատուկ: Եղիշէ կը պատմէ որ Յաղկերտ ճաշի կը հրաւիրէ հայ նախարարները, եւ «զիւրաքանչիւր տեղի շնորհէր նոցա զբաղմականին»⁽²⁾, այսինքն ճաշի բաղմականին (զորդին) վրայ հայ նախարարներուն իւրաքանչիւրին իրեն զիրքին յատուկ պատուոյ տեղ կը նստեցնէր: Ինչպէս պիտի տեսնենք, ինքնին մեծ պատիւ էր արքունի զորդի վրայ նստիլ կամ ճաշելը:

Հոս միջանկեալ կ'ուզեմ շեշտել որ Բիւզանդի վկայութիւնը հնագոյն մատենագրական վկայութիւնն է որ մեզի հասած է, ոչ միայն հայ՝ այլ եւ օտար գրականութենէն, ուր կը յիշուին զորդեր, ինչպէս նաեւ անոնց ճաշի ժամանակ գործածուիլը:

Ճաշելու ծառայող զորդերէ զատ՝ հայ արքունեաց մէջ կային պատերէն կախուած նրբահիւս զորդեր, ընդելուզեալ մարզաբիտներով կամ զանազան զոհարներով եւ ոսկի կամ արծաթ առէջքով, ճոխ կերպով հիւսուած: Ասոր համար հնագոյն վկայութիւնը կը գտնենք Ասողիկի մօտ, որ ժ դարուն Աշոտ Ողորմածի պալատը կը նկարագրէ զարդարուած ճոխ բաղմականներով (զորդերով), որոնց բոլոր արժէքը աղքատներուն կը բաժնէր այս աղքատասէր հայ արքան⁽³⁾: Այսպիսի զորդեր, որոնք պատերէն կը կախուէին, կը յիշէ Բար Երբէոս, նոյն այդ ժ դարուն: Ըստ անոր՝ 917-ին, Կոստանդին Բիւզանդիոնի կայսրը, Արարացոց կ'ուղարկէ զեսպանութիւն մը՝ որ Պաղտատի մէջ կը հիւրասիրուի Մուխդատի Խալիֆայէն մեծածոխ կահաւորուած սրահի մը մէջ, ուր միայն «որմերէն կախեալ զորդերը 22,000ի կը հասնէին, բացի անոնցմէ՝ որոնք գետինը (փռուած) կը գտնուէին ու կը կոխկոտուէին⁽⁴⁾: Իսկ Մասկաւայ՝ նոյն այս դէպքը, այսինքն ընդունելութիւնը, 917 Յուլիս 25ին նշանակելէ վերջ, կը վրկայէ որ ընդունելութեան պալատը զարդարուած էր «զորդանման վարդադոյրներով, զորդերով եւ վարդադոյրներով որոնց համար 30,000 տինար (190,000 ոսկի տոլար. Յ. Ք.) գումար մը ծախսուեցաւ»⁽⁵⁾: Իսկ Աս Սիււտի կը վկայէ որ «պատերուն վրայ զետեղուած դիպուկեայ ծածկոցները 38,000 էին, եւ կային 22,000 զորդ»⁽⁶⁾:

Անշուշտ պէտք է ընդունիլ որ հարստութեան եւ ճոխութեան կողմէ հայերը չէին հասնիր իրենց զբաղիններուն, այսինքն Պարսից եւ Արարացոց: Ծանօթ է որ երբ Արարացիք է դարուն Տիգրոնը գրաւեցին, արչաւող բանակին աւար ինկաւ հրաշալի եւ մեծածախս զորդ մը՝ զոհարներով ընդելուզեալ եւ ոսկիով, արծաթով ու մետաքսով հիւսեալ, որ դարէ մը աւելի զարդը եղաւ Պարսից արքունական պալատին: Արարացիք կտոր կտոր ըրին այս անուղական զորդը՝ իրր աւար կա-

(2) Թիֆլիս, 1904, էջ 31:

(3) 1885ի տպագր. էջ 181:

(4) The Chronography. — Vol. I, p. 157.

(5) The Eclipse of the Abbasid Caliphate. — 1921, Vol. IV, p. 57.

(6) History of Caliths. — Yalaludin As Suyuti. — Calcutta, 1881, p. 399.